ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Artsakh State University

Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

ՊՐԱԿ 2 **ТОМ** 2 VOLUME 2
2021
Ստեփանակերտ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Հրատարակվում է 1998թ-*ից.*
Պարբերականությունը՝ տարեկան երկու անգամ
Издается с 1998г. *Периодичность – дважды в год*
Issued since 1998. Frequency – twice a year
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.
Խմբագրական խորհրդի նախագահ՝ *բ.գ.թ. Սարգսյան Ա.Յու.*
Председатель редакционного совета: *к.ф.н. СаргсянА.Ю.*
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.
Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.
Главный редактор: *д.и.н. Аванесян В.М.*
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board
Հասարակական գիտություններ
1. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
2. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA
3. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ., պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
4. Մանգասարյան Ռ.Յա, տ.գ.թ. – Мангасярян Р.Я., к.э.н. –Mangasaryan R.Ya., Ph.D. in Economics
5.Բալայան Վ.Ռ., պ.գ.դ.- Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., բ.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. Ենգոյան Ա.Փ., ք.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն., բ.գ.դ., Арутюнян В.Н., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. Խանյան Ս.Ա., բ.գ.դ.- Ханян С.А., д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Տեր-Մաթոսյան Պ., բ.գ.դ. (ԱՄՆ) –Тер-Матосян П. д.ф.н. (США) -Ter-Matosyan P., Doctor of Science (USA)
11. Տեր-Մկրտչյան Բ., բ.գ.դ. (ԱՄՆ) – Тер-Мкртчян Б. д.ф.н. (США) - Ter-Mkrtchyan B., Doctor of Science (USA)
12. Տանշինա Ն.Պ., պ.գ.դ. (ՌԴ) – Таньшина Н.П. д.и.н. (РФ) – Tanshina N.P., Doctor of History (RF)
13. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
14. Կարապետյան Վ.Ս., հ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
15. Հովհաննիսյան Լ.Ծ., բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
16. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences

17. Մարգարյան Լ.Գ., բ.գ.թ.– Маргарян Л. Г., к.ф.н.– Margaryan L.G., Ph. D. in Philology, Scientific Secretary of ASU
18. Մխիթարյան Ա.Մ., հ.գ.թ. – Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psycology
19. Յարամիշյան Վ.Բ., հ.գ.թ. – Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psycology
20. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia
21. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ. – Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
22. Թադևոսյան Ա.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ, Շ. ՄԻՆԱՍՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԱՒՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ..... 9

Կ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁՆԱՆԻՇ ԳՈՅԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ..... 18

Մ.ԲԱԼԱՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱՁԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ..... 25

Ն.ԴԱՎԹՅԱՆ
Կ. ԶԱՐՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ..... 31

Ա.ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «REGNUM» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ղարաբաղյան 44-օրյա պատերազմի օրինակով)..... 41

Ա.ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Մ.ԱԴԱՄՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ..... 46

Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.... 53

Ն. ՄԱՐՈՅԱՆ
ԲԱՌԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՈՒԹՆՅԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՐԻՈԼԵՏՆԵՐՈՒՄ..... 63

Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Շ. ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ » ՎԵՊՈՒՄ..... *72*
Ա.ՄԻՐԶՈՅԱՆ
ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԸ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԵՋ..... *89*
ՕՏԱՐ Լ.ԵԶՈՒ
Հ. ՂԱԶՈՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ..... *100*
Ի.ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍԼԵՆԳՈՒՄ ՓՈԽԱՌՅԱԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ..... 108
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՖՐԱՆԿՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ..... 115
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ/1918-1920թթ/: ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՄՆԵՐԸ..... *127*
Վ.ԲԱԼԱՅԱՆ
ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ (1991-2021թթ.)..... *144*
Ի. ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԿԻՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ..... 156
Ռ. ԳԱԼՉՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ ՕՏԱՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԵՎ 1918-2021 թթ. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 168
Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... *186*

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆՈՐ ՄԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (2020 Թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)..... 213
Հ.ՓԱՇԱՅԱՆ, Լ.ԲԱԼԱՅԱՆ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱՀՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (2005-2006ԹԹ.) ԵՎ ՌԱՄԲՈՒՅԵՈՒՄ ՉԲԱՅՎԱԾ ՇԱՄՊԱՅՆԸ..... 225

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Մ.ՂԱԼԱՅԱՆՑ
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ..... 238

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 249
Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ..... 263
Ռ. ԺԱՄԿՈՅՅԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՈՏ..... 270
Մ. ՓԻԼՈՍՅԱՆ, Ռ. ԺԱՄԿՈՅՅԱՆ
ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 278
Զ.ՔԷՇԻՇԵԱՆ
ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՒՈՅԹԸ՝ ՄԻՆՉԵԻ ԿՈՄԻՏԱՍ..... 286

Ն.ՇԱԼՈՒՆՑ
ՀՈՄԵՈՍՏԱՋԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԵՂՈՒՄԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ..... *293*
Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ՀԵՐՈՆՏՈՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԹԵՄԱՅՈՎ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ..... 301
Վ. ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ՎԱԽԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ... 309
Լ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, (METRIS BV)
ԱՈՒՏԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆԸՆԴՀԱՏ ՌԵԺԻՄՈՒՄ ԿՐԾՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՑ ՍԹՐԵՍԻ ԳԵՐԶԱՅՆԱՅԻՆ ՎՈԿԱԼԻԶԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ԱՈՒՏԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՉԱՓ ԵՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ..... 317
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ..... *335*
Տ. ԳԵՎՈՐԳԱՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԸՍՏ ԱՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ..... *345*
Մ.ԶԱՔԱՐՅԱՆ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՆԱՀՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽԱԽՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆ..... 351
Լ.ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ..... 360
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՄՊԻՐԻԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿԱՆՈՆԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՌԱՋԱԴԵՄ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ 376

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ԵՎ ԴՐԱ ՄՈԴԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.....

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ..... *386*

Ա. ՂԱՋԱՐՅԱՆ

ՎԱՐԿԱՅԻՆ ՍՔՈՐԻՆԳԻ ԵՎ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ..... *398*

Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, Մ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ..... *404*

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԵՆՍԱՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՀ-ՈՒՄ *419*

Հ. ՍԱՅԱԴՅԱՆ

ՀՀ - ՈՒՄ ԲՈՒԺԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... *436*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մ. ԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՐԱՐՎԱԾ ԳԱԼԻՔԻՆ.... *445*

Զ.ՍԱՌԱՋՅԱՆ

«ՀՆՉՈՂ ՁԱՅՆԵՐ» ԳՐՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊՈԼԻՖՈՆԻԱՆ..... *452*

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԱՍՈՒՆՈՒՄ ԵՎ ՍԱՍՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ. ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ «ԷՐԳՐԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ» ԳԻՐՔԸ *460*

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

Նռանե ՍԱՐՈՅԱՆ
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ,
գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի
ասպիրանտ
E-mail euronur11@gmail.com

ԲԱՌԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՈՒԹՆՅԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՐԻՈԼԵՏՆԵՐՈՒՄ

Շատ հայ գրականագետներ գրել են բանաստեղծություններում կրկնվող հնչյունների մասին (ասոնանս, կոնսոնանս, ալիտերացիա)։ Սակայն բառային կրկնությունները այդքան էլ չեն հետաքրքրել նրանց։ Այս հոդվածում ուսումնասիրվում են Չարենցի տրիոլետներում բառային կրկնությունների տարբեր տեսակները և դրանց առանձնահատկությունները։ Բառային կրկնությունների շատ տեսակներ կան, և Չարենցը օգտագործել է դրանցից մի քանիսը (անաֆորա, էպանալեպսիս, էպիստրոֆ, անադիպլոսիս, դիակոպ և այլն)։ Հոդվածում նաև ասվում է՝ ինչպես են այդ բառերը օգնում հասկանալ բանաստեղծության իմաստը։

Բանալի բառեր՝ Չարենց, բանաստեղծական կայուն ձև, տրիոլետ, անաֆորա, էպանալեպսիս, էպիստրոֆ, դիակոպ, սինդետոն, ասինդետոն, պոլիսինդետոն

Н. Сароян

ОСОБЕННОСТИ ПОВТОРЯЮЩИЙСЯ СЛОВ В ОКТАВАХ И ТРИОЛЕТАХ ЧАРЕНЦА

Многие армянские литературоведы написали о букв, которые повторяются в стихотворениях (ассонанс, консонанс, аллитерация). Но повторения слов не особо интересовали их. В этой статье рассматриваются разные виды повторений и их особенности в триолетах Чаренца. Есть много видов повторений, и Чаренц использовал некоторые из них (анафора, эпаналепсис, эпистроф, анадиплосис, диакоп и т.д.). В статье также говорится как эти слова помогают понимать смысл стихотворений.

Ключевые слова: Чаренц, твердые формы стихотворений, триолет, анафора, эпаналепсис, эпистрофа, диакоп, синдетон, асиндетон, полисиндетон.

N. Saroyan

UNIQUE FEATURES OF REPEATED WORDS IN CHARENTS'S OCTAVES AND TRIOLETS

Many Armenian literary scholars wrote about letters, which are repeated in poems (assonance, consonance, alliteration). But the repetition of words didn't interest them. The article discusses different kinds of repetitions and their characteristics in Charents's triolets. There are many kinds of repetitions, and Charents used some of them (anaphora, epanalepsis, epistrophe, anadiplosis, diacope etc.). It is also discussed how those words help understand the meaning of poems.

Key words: Charents, fixed verse, triolet, anaphora, epanalepsis, epistrophe, diacope, syndeton, asyndeton, polysyndeton.

Խոսքի մեջ (գրավոր և բանավոր) կրկնությունը[1] ուշադրություն գրավելու ամենահեշտ միջոցն է: Կրկնվել կարող են և՛ հնչյուններ (ալիտերացիա, ասոնանս, կոնսոնանս)[2], և՛ բառեր, արտահայտություններ և՛ նույնիսկ նախադասություններ (անաֆորա, էպանալեպսիս, էպիստրոֆ, սինդետոն, պոլիսինդետոն, ասինդետոն, դիակոպ և այլն)[3]: Շրջապատված լինելով տարբեր արտահայտություններով՝ կրկնվող բառերը նորովի են բացահայտում ասելիքը: Հայ գրականությունը ուսումնասիրողների ուշադրությունից չեն վրիպել կրկնվող հնչյունները: Իսկ կրկնվող բառերի (արտահայտությունների, նախադասությունների) մասին ուսումնասիրություններ մեծ հաշվով չկան: Կրկնության այս տեսակը ևս ուշադրության է արժանի, քանի որ այն բանաստեղծությանը ոչ միայն մեղեդայնություն է հաղորդում, այլ նաև հաճախ հուշում, թե որտեղ է բանաստեղծության հիմնական իմաստը գտնելու բանալին[4]: Բառային կրկնությունների շատ տեսակներ կան (anaphora՝ բառի կամ արտահայտության կրկնությունը ամեն հաջորդ նախադասության կամ տողի սկզբում, epistrophe՝ բառի կամ արտահայտության կրկնությունը նախադասության վերջում, diacope՝ բառի կամ արտահայտության կրկնությունը

---

[1] *Կրկնությունների մասին ավելի հանգամանալից տե՛ս* ***Ю. М. Лотман****, О поэтах и поэзии, Санкт-Петербург "Искусство-ПСБ", 1996, стр.50-54, 71-77.*

[2] *Կոնսոնանսի և ալիտերացիայի տարբերությունը այն է, որ կոնսոնանսը բառի վերջում հանդիպող տառի (հնչյունի) կրկնությունն է: Իսկ ալիտերացիայի դեպքում կրկնվում են այն տառերը (հնչյունները), որոնք գտնվում են բառի սկզբում կամ շեշտվող վանկում: Քանի որ հայերենում բառի վերջին վանկն է շեշտվում, այդ պատճառով ալիտերացիան և կոնսոնանսը կարող են համընկնել:*

[3] *Կրկնությունների ամբողջական ցանկին ծանոթանալու համար տե՛ս The Princeton Encyclopedia Of Poetry & Poetics, Fourth Edition, New Jersey, Princeton University Press, 2012.https://en.wikipedia.org/wiki/Repetition_(rhetorical_device)*

[4] *Տե՛ս* ***Ю. М. Лотман****, О поэтах и поэзии, Санкт-Петербург "Искусство-ПСБ", 1996, стр.73.*

նրանց միջև մեկ կամ մի քանի բառի առկայության դեպքում, epanalepsis՝ բառի կրկնությունը մի տողի սկզբում և մյուսի վերջում, homeoptoton՝ բառերի վերջավորությունների կրկնություն, syndeton՝ երկու բառի «և» կամ «ու» շաղկապների միջոցով միացում, polysyndeton՝ երկուսից ավել բառերի «և» կամ «ու» շաղկապների միջոցով միացում, asyndeton՝ շաղկապների բացակայություն, antimetabole՝ նույն նախադասության կրկնությունը բառերի հակառակ դասավորությամբ և այլն...): Կրկնություններ հանդիպում են հատկապես բանաստեղծական կայուն ձևերում: Մասնավորապես ֆրանսիական բանաստեղծական կայուն ձևերը (ռոնդո, տրիոլետ, վիլլանել և այլն) կառուցվում են կրկնությունների հիման վրա: Բանաստեղծական կայուն ձևերից զերծ չէ նաև հայկական պոեզիան: Տրիոլետների, ռոնդոների և այլ կայուն ձևերի բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել և՛ արևմտահայ, և՛ արևելահայ բանաստեղծների մոտ: Չարենցը, սակայն, եզակի է, քանի որ նրա գրական հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվում բանաստեղծական մի քանի կայուն ձևերով. «...Չարենցը ավելի շատ տաղաչափական ձևեր է կիրառել, քան մնացած հայ բանաստեղծները միասին վերցրած: Եվ դա՝ սկսած տաղաչափական զանազան համակարգերից, ռիթմական գործոնների՝ չափերի, հանգերի, տների բազմատեսակ կիրառությունից մինչև արևելյան և արևմտյան բանաստեղծության ձևերը (գազել, մուխամազ, բեյթ, ռուբայի, դիստիքոս, տրիոլետ, սոնետ, ռոնդո), հնագույն ռիթմական եղանակներից մինչև նորագույն հնարանքները, ամենադասական կառուցվածքներից մինչև ամենանորը, անգամ արտառոցը: Չարենցին կարելի է անվանել ոչ այլ ինչ, քան նորագույն պոեզիայի «մայրաքաղաք», բանարվեստի օրենսդիր ու նոր դարագլխի հիմնադիր»[1]:

Չնայած որ «Ութնյակներ արևին» շարքի ութնյակները բանաստեղծական կայուն ձևերին չեն պատկանում, այնուամենայնիվ հետաքրքիր է դրանք ներկայացնել ութ տողից բաղկացած տրիոլետների հետ համեմատության համատեքստում: Այս համեմատությունը հնարավորություն է տալիս նաև բացահայտել տրիոլետների կառուցվածքային հետաքրքիր կողմերը:

Ութնյակներում հաճախակի է հանդիպում անաֆորան.

Ու նորից ելած խանդավառ,
Օրերի կապույտ բանտում,
Ցրում է լո՛ւյս ու գոհար,
Ծփում է ու վառ խնդում:
Ով որ կա խեղճ ու անտուն,
Ով որ կա մերկ ու վհատ –
Թող այսօր խնդա խնդուն,

[1] ***Դ.Գասպարյան****, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Երևան, 1979, էջ 225:*

Թող լինի լուրթ ու զվարթ…

Անաֆորա հանդիպում է ութնյակի երկրորդ քառատողում: Քառատողի առաջին երկու տողերը մեկ ամբողջություն են կազմում երկրորդ երկու տողերի հետ: Առանց անաֆորայի՝ նախադասությունը կունենար հետևյալ տեսքը՝ «Ով որ կա խեղճ ու անտուն, մերկ ու զվարթ, / Թող այսօր խնդա խնդուն, լինի լուրթ ու զվարթ»: Այս նախադասությունը զուրկ չէ երաժշտականությունից, քանի որ «ով որ կա» և «թող լինի» արտահայտությունները ունեն հավասար վանկեր, և դրանք բանաստեղծությունից հանելով՝ տողերի արտասանության ժամանակը դարձյալ մնում է նույնը: Եվ երկրորդ՝ «անտուն» և «խնդուն» բառերը միասին կազմում են ներքին հանգ, իսկ «վհատ» և «զվարթ» բառերը հանգավորվում են միմյանց հետ: Հետևաբար՝ տվյալ ութնյակում անաֆորան որոշ չափով երկարացնում է նախադասությունը և այն արտասանելու ժամանակը: Քառատողի առաջին երկտողում «ով որ կա» արտահայտությունը չի բաժանում դրանից հետո եկող բառերը. այսինքն՝ մարդկանց մի մասը ոչ թե «խեղճ ու անտուն» են, մյուս մասը՝ «մերկ ու վհատ», այլ միևնույն մարդիկ և՛ «խեղճ ու անտուն» են, և՛ «մերկ ու վհատ»: Նույնկերպ՝ հաջորդ տողերում. ոչ թե «խեղճ ու անտուն» մարդիկ «խնդան խնդուն», իսկ «մերկ ու վհատ» մարդիկ «լինեն լուրթ ու զվարթ», այլ այդ բոլոր մարդիկ և՛ «խնդան խնդուն», և՛ «լինեն լուրթ ու զվարթ»:

Անաֆորան կապված է կոնկրետ տողերի հետ: «Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին...» ութնյակում անաֆորա հանդիպում է առաջին քառատողի վերջին երկու տողերում.

Հազար վարդեր կրակվեցին շուրջը, կողքին,
Հազա՛ր խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան:

«Հազար» բառը ցույց է տալիս ենթակայի (վարդերի, խաշխաշների, գարնան օրերի, ծիածանների) քանակը, իսկ քանի որ ենթակաները ութնյակի տվյալ հատվածում շատ են, բանաստեղծը ճիշտ է համարել դրանք երկու տողի մեջ տեղավորել՝ չխախտելու համար տողերում վանկերի քանակը և երաժշտականությունը:

Անաֆորաներ կան նաև այլ ութնյակներում՝ «Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում…»՝ ինչ որ լավ է, «Բայց ինչու՞ միայն կիրք ու կին…»՝ նույն, «Ու նորից ելած խանդավառ…»՝ ով որ կա, թող, «Հոսում է տաք, ինչպես հեշտանք, կամ ձույլ ոսկի…»՝ հոսում է:

«Փայլում են ոսկի սվիններ» ութնյակում ամբողջական տողեր են կրկնվում, որոնք կարելի է նաև համարել ոչ միայն անաֆորա, այլ նաև էպիստրոֆ.

Փայլում են ոսկի սվիններ,
Պսպղում է ոսկի մի վահան,

Ոսկեդեմ արևի վրա
Փայլում են ոսկի սվիններ։
Ախ, ինչ լա՛վ է զինվել ու զինել
Արևով, արյունով, - ահա
Ոսկեդեմ արևի վրա
Փայլում են ոսկի՛ սվիններ...

Առաջին տողը նույնությամբ կրկվում է չորրորդ և ութերորդ տողերում, իսկ երրորդը՝ յոթերորդ։ Այն տողերի կրկնությամբ տրիոլետ է հիշեցնում, բայց տրիոլետների շարքին դասելը տվյալ դեպքում ճիշտ չէ, քանի որ տողերի կրկնությունը չի հետևում դասական տրիոլետի տողերի կրկնության ձևին։ Ութնյակը ունի A-b-B-A/a-b-B-A հանգավորում, իսկ տրիոլետները՝ A-B-a-A/a-b-A-B կամ A-B-b-A/b-a-A-B[1]։ Հավանաբար, Չարենցը ինքն էլ հաշվի է առել այս հանգամանքը և բանաստեղծությունը զետեղել ոչ թե տրիոլետների, այլ ութնյակների շարքում։ Եթե տրոլետներում նախադասությունը տարբեր տողերի միջև կիսելու դեպքում A-ն նախադասության սկիզբ կարող է լինել, իսկ B-ն շարունակություն կամ ավարտ, ապա վերոնշյալ ութնյակում նախադասության սկիզբը B-ն է։ Չնայած որ բանաստեղծությունը սկսվում է «Փայլում են ոսկի սվիններ» նախադասությամբ, այնուամենայնիվ երրորդ և յոթերորդ տողերը տվյալ նախադասության սկիզբ են ծառայում, և դրանք որպես առանձին միավոր հանդես չեն գալիս։

Անաֆորայի օրինակներ կարելի է գտնել բոլոր տրիոլետներում, քանի որ տրիոլետների հիմնական առանձնահատկությունը տողերի կրկնությունն է։ Սակայն սա նաև, ինչպես արդեն ասացինք, էպիստրոֆ է, որովհետև որոշ տողեր վերջանում են նույն բառով, արտահայտությամբ կամ նույնիսկ նախադասությամբ.

Գիտե՞ք, որ գարուն է արդեն,
Բոլորը թափվել են փողոց.
Լսու՞մ եք անուշ մի զնգոց –
Գիտե՞ք, որ գարուն է արդեն։
Դյութում են շրթերը վարդե,
Սրտերը կրակ են ու բոց –
Գիտե՞ք, որ գարուն է արդեն,
Բոլորը թափվել են փողոց։

Ի տարբերություն անաֆորայի (եթե այն ոչ թե ամբողջական տողին, այլ տողասկզբին է վերաբերում)՝ էպիստրոֆը հանգավորմանը մասնակցող

[1] *Տե՛ս* **James Noble Holm**, *Poetry And Its Forms, New York, G.P. Putman's Sons, 1938, p. 375-377.*

կրկնություն կարող է լինել: Տվյալ տրիոլետում կրկնվող տողերը առանձին նախադասություններ են: Երկու առանձին նախադասություններ որպես կրկնվող տողեր կան նաև այլ տրիոլետներում («Իմ երգը միշտ Ձեզ է երգում՝ / Դուք երգ ու հմայք եք, տիկի՛ն...», «Երգում է ծովը, դաշտը, հովը, / Ամե՛ն ինչ երգ է ու շշուկ...», «Հիմա ամեն ինչ անիմաստ է, / Իզուր այդպես դու շիկներցիր...» և այլն): Քիչ չեն նաև այն տրիոլետները, որտեղ կրկնվող տողերը միասին կազմում են ամբողջական նախադասություն («Երեկ Ձեր պրոֆիլը այնքան, / Այնքան հմայիչ էր, գիտե՞ք...», «Ձեր դեմքի էմալը երեկ / Հստակ է, որպես ապակի...», «Այսօր Ձեր մատները, տիկի՛ն, / Նման են հեռու մի հուշի...», «Շրշում են իմ շուրջը, շրշում / Շորեր ու շորեր կանացի...» և այլն):

Քանի որ տրիոլետների հիմնական առանձնահատկությունը տողերի կրկնությունն է, ապա այստեղ էպիստրոֆը իր ողջ հնարավորություններով հանդես գալ չի կարող: Այլ բանաստեղծություններում էպիստրոֆի միջոցով կարելի է և՛ թեման ընդարձակել, և՛ նույն բառը տարբեր իմաստ ու բովանդակություն ունեցող նախադասություններում օգտագործել: Տրիոլետները այս տեսանկյունից սահմանափակ հնարավորությունն են տալիս, քանի որ իրար հաջորդող տողերի կրկնությունը չի թույլատրում բառեր ավելացնել և պակասեցնել:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հոմեոպտոտոնը, որը ենթադրում է տարբեր բառերի միևնույն վերջավորությունը ունենալը.

Նետե՛լ է երկաթե մի ձեռք
Դեպի վեր ոսկի մի ծնծղա.
Բռնկվել է ոսկի ծնծղան,
Դարձել է արնաձոր մի վերք:
Վառվել է երկնքում հակինթ
Ու ծորում է արյունը յուր կեզ,-
Զոհվե՛լ է երկնքում վճիտ.-
Ինչքան լա՛վ է հատնումը հրկեզ...

Հոմեոպտոտոնը հանդիպում է համարյա բոլոր հանգավորվող բանաստեղծություններում, եթե գործ ունենք ճշգրիտ հանգավորման[1] հետ: Հանգավորվող բառերից հոմեոպտոտոնի օրինակ են **կեզ**-հր**կեզ** բառերը: Բանաստեղծը հոմեոպտոտոնի «փունջ» է ստեղծում տողի ներսում: **Նետել է, բռնկվել է, դարձել է, վառվել է, զոհվել է** բառերը դրա լավագույն օրինակն են: Այս բառերի միջոցով տողերի սկզբում ներքին հանգ է գոյացել:

---

[1] *Տե՛ս* ***Էդ.Զրբաշյան, Հ.Մախչանյան****, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, էջ 175:*

«Այն արև՛ն է՝ կարմի՛ր ու հասուն...» ութնյակում միայն «է» օժանդակ բայի միջոցով է հոմեոպտոտոն ստեղծվում, քանի որ դրանից առաջ ընկած բառերը պատկանում են տարբեր խոսքի մասերի՝ արևն է, կախվել է, բորբոքում է, լավ է: «Աղջկա կոնքերի նման...» ութնյակում հոմեոպտոտոնների քանակը շատանում է. «-ում» և «է»՝ վառվում է, խնդում է, «են»՝ վրնջում են, նժույգներ են, խոսք են: Հոմեոպտոտոնը հետաքրքիր է նաև **երազուն, կիզուն, հասուն, անհուն** բառերի դեպքում: Բոլորը միասին ունեն «-ուն» հոմեոպտոտոն, իսկ **երազուն և կիզուն** բառերի դեպքում՝ «-զուն»:

Հոմեոպտոտոններ հանդիպում են այլ ութնյակներում ևս. «Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում...»՝ վառ<u>ում</u>, աշխարհ<u>ում</u>, հր<u>ում</u>, մոխրացի<u>ր</u>, վառվի<u>ր</u>, «Տեսնում եմ՝ արևի վրա...»՝ վրնջ<u>ում *են*</u>, ծծ<u>ում *են*</u>, վախեն<u>ում *են*</u>, բորբոքվ**ել *են***, մերկաց**ել *են***, «Արնակեզ, սուր մի նիզակ...»՝ նիզ<u>ակ</u>, պս<u>ակ</u>, ն<u>շան</u>, շու<u>շան</u>, նի<u>շ</u>, ուրի<u>շ</u> և այլն:

Հոմեոպտոտոն կա նաև տրիոլետներում՝ «Երեկ Ձեր պրոֆիլը այնքան...»՝ հմայի<u>չ էր</u>, դյութի<u>չ էր</u>, պրոֆիլ<u>ը</u>, սանրվածք<u>ը</u>, ժպիտ<u>ը</u>, մանկ<u>ան</u>, այնք<u>ան</u>, «Ձեր դեմքի էմալը երեկ...»՝ հստակ <u>էր</u>, կարոտ <u>էր</u>, «Այսօր Ձեր մատները, տիկի՛ն...»՝ մաղում <u>են</u>, նման <u>են</u>, հուշի, փոշի, ուրիշի, «Շրշում են իմ շուրջը, շրշում...»՝ կան**<u>ացի</u>**, գն**<u>ացի</u>**, փողո**<u>ցի</u>**, լս<u>ում եմ</u>, անցն<u>ում եմ</u>, «Երգում եմ ծովը, դաշտը, հովը...»՝ ծով<u>ը</u>, դաշտ<u>ը</u>, հով<u>ը</u>, սիրտ<u>ը</u>, «Հիմա ամեն ինչ անիմաստ է...»՝ կյանք<u>ը</u>, իմաստ<u>ը</u>, ծով<u>ը</u>, ղեկ<u>ը</u>, լաստ<u>ը</u>, նավ<u>ը</u> և այլն:

«Իմ երգը միշտ Ձեզ է երգում...» տրիոլետում կարելի է հանդիպել հետաքրքիր հոմեոպտոտոնի: Սա կապված է նաև հայերենի առանձնահատկության հետ: «Հմայք եք» հնչաբառը կարող է հոմեոպտոտոն կազմել «լսեք» բառի հետ: «Գիտե՞ք, որ գարուն է արդեն...» տրիոլետում «գիտեք» բառը հոմեոպտոտոն է կազմում է «լսում եք» հնչաբառի հետ:

Սակավ հանդիպում է անտիմետաբոլը.

Երեկ Ձեր պրոֆիլը այնքան,
<u>Այնքան հմայիչ էր</u>, գիտե՞ք,
Եվ Ձեր սանրվածքը թեք
Երեկ <u>հմայիչ էր այնքան</u>:
Դյութի՛չ էր Ձեր ժպիտը մանկան,
Ձեր քաղցր ժպիտը՝ սրտաբեկ,-
Երեկ Ձեր պրոֆիլը այնքան,
<u>Այնքա՛ն հմայիչ էր</u>, գիտե՞ք...

Տրիոլետում դասական ձևից փոքր-ինչ շեղում կա: Առաջին տողը նույնությամբ չորրորդում կրկնելու փոխարեն բանաստեղծը առաջին երկու տողերը միաձուլել է միմյանց:

Քիչ չեն սինդետոնները ութնյակներում. «Ես գիտեմ՝ արևի վրա...»՝ վերք ու ժանգ, կուրծք ու ծիծ, վերք ու քրքիջ, «Արնակեզ, սուր մի նիզակ...»՝ փառք ու պսակ, լույս ու շուշան, «Կարծես ես ճամփա եմ ընկել...»՝ զվարթ ու անփույթ, հրաշք է ու տենդ, «Բայց ինչու՞ միայն կիրք ու կին...»՝ կիրք ու կին, շոգ ու հեշտանք, տխրություն ու մուժ, կարմիր ու լուսե, «Փայլում են ոսկի սվիններ»՝ զինվել ու զինել, «Ու նորից ելած խնդավառ...»՝ լույս ու գոհար, խեղճ ու անտուն, մերկ ու վհատ, լուրթ ու զվարթ, «Միայն խմիր արեգակի բույրը ջինջ...»՝ բուրմունք ու սեր, երգ ու գույն, ոսկի ու ծափ, կանչ ու ճիչ: Հետաքրքրական է, որ հանդիպում է ոչ թե «և», այլ «ու» շաղկապը: Նույնն է նաև պոլիսինդետոնի պարագայում. «Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին...»՝ հազար խաշխաշ, ու զարնան օր, ու ծիածան, «Հոսում է տաք, ինչպես հեշտանք, կամ ձույլ ոսկի...»՝ հոսում է ծանր, ու հորդահոս, ու արնավառ, բարձր ճիչեր, ու հրդեհներ, ու ծիածան: Ութնյակներում հանդիպում է նաև ասինդետոն՝ «Ինչպես շոգ, ճնշող ոսկի...»՝ բրոնզեձույլ, հասուն, հոսուն: Ասինդետոն կա նաև տրիոլետներում՝ «Երգում է ծովը, դաշտը, հովը...»՝ ծովը, դաշտը, հովը:

Չարենցի հեղինակած շարքերում իշխում է իմաստի ամբողջական ընկալումը, ամեն բանաստեղծության մեջ դրա յուրովի մեկնաբանումը. ««Ութնյակներ արևին» շարքում՝ որպես մի կուռ համակարգ, հնչում է չարենցյան վստահ, պոռթկուն և իմաստուն ձայնը: Բոլոր բանաստեղծությունները գրված են ներկա ժամանակով, ամեն ինչ կատարվում է հենց հիմա, և ընթերցողին էլ է թվում, որ ինքն էլ է բանաստեղծության մեջ, ինքն էլ է մասնակից կյանքի ու կենսասիրության այդ հրավառությանը»[1]: Սա նաև ութնյակներում տեղ գտած կրկնությունների շնորհիվ է տեղի ունենում:

Չարենցի՝ տաղաչափական և բանաստեղծական ձևերի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը չի մնացել միայն ցանկության շրջանակներում: Նա ոչ միայն փորձել է ուսումնասիրել դրանք, այլ նաև լայնորեն կիրառել է: Իզուր չէ, որ բանաստեղծը գրել է և՛ տարբեր կառուցվածքներ ունեցող բանաստեղծություններ, և՛ օգտագործել է հանգի տարաբնույթ ձևեր (իգական, արական, ճշգրիտ, մոտավոր հանգեր): Իսկ բառային կրկնությունները ևս մեկ հորիզոն են բացում Չարենցի բանաստեղծությունները վերլուծելու տեսանկյունից:

[1] ***Աստղիկ Բեքմեզյանի*** *նշվ.աշխ., էջ 229:*

Գրականություն

1. **Բեքմեզյան Ա.**, Տողամիջյան ընթերցումներ, Երևան, «Վան Արյան», 2016թ., 336 էջ:
2. **Գասպարյան Դ.**, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Երևան, 1979, 388 էջ:
3. **Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, 352 էջ:
4. **Лотман Ю. М.**, О поэтах и поэзии, Санкт-Петербург “Искусство-ПСБ”, 1996, 848 стр.
5. The Princeton Encyclopedia Of Poetry & Poetics, Fourth Edition, New Jersey, Princeton University Press, 2012. 1680 p.
6. **James Noble Holm**, Poetry And Its Forms, New York, G.P. Putman’s Sons, 1938, p. 500.
7. https://en.wikipedia.org/wiki/Repetition_(rhetorical_device)

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

2/2021

Հանձնված է տպագրության՝ 18.11.2021 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 21.12.2021 թ.:
Ծավալը՝ 29 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան,
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀիրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am– Գիտական հրապարակումներ–
Գիտական տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am– Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru, website:
www.asu.am– Scientific publications – Proceedings.

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am